

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԶՄԱՆ ԽՆԴԻՐԸ 1960-ԱԿԱՆ ԹԹ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՄԻՆ

1960-ական թվականների երկրորդ կեսին՝ Մեծ եղեռնի 50-րդ տարելիցի միջոցառումներից հետո, սփյուռքահայությունը շարունակում էր պայքարը Հայկական հարցի լուծման և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար: Այդ ժամանակահատվածում նկատելիորեն մեծանում է համաշխարհային հանրության հետաքրքրությունը Հայկական հարցի նկատմամբ. սկսվում են քննարկումներ միջազգային տարբեր կազմակերպություններում, գիտական և հասարակական համաժողովներում ու խորհրդաժողովներում: Այդ գործընթացները լայն արձագանք են գտնում նաև թուրքական մամուլում, և վերջիններիս ձեռնարկած քայլերը դառնում են թուրքական ժխտողական քաղաքականության և հակահայկական քարոզչության հիմքերը:

Բացի դրանից, 1960-ական թթ. Հայկական հարցը շահարկվում էր Մեծ տերությունների կողմից, երբ վերջիններս ցանկանում էին ճնշում գործադրել Թուրքիայի վրա: Նախ, նկատենք, որ կիպրական խնդրի շուրջ Թուրքիայի որդեգրած քաղաքականության և ծավալած գործընթացների հետևանքով լարվել էին թուրք-ամերիկյան հարաբերությունները, և պաշտոնական Վաշինգտոնը սպառնում էր չպաշտպանել Թուրքիայի տարածքային ամբողջականությունը: Այդ մասին է վկայում 1974 թ. օգոստոսի 22-ին Թուրքիայի վարչապետ Բ. Էջևիթի հայտարարությունը, «1964 թ. հունիսի 5-ին ԱՄՆ-ի նախագահ Լինդոն Ջոնսոնը վարչապետ Իսմեթ Ինյոնյունի ուղղած իր նամակում սպառնում էր, որ հանդիսանալով ՆԱՏՕ-ի դաշնակից՝ չի աջակցի Թուրքիային Խորհրդային Միության հարձակման դեպքում, եթե Թուրքիան իր զորքերը մտցնի Կիպրոս՝ ընդդեմ Հունաստանի»¹: Դեռևս 1964 թ. մայիսի 10-ի՝ ԱՄՆ-ի պետքարտուղարության «կիպրական հարցին» վերաբերող փաստաթղթում առաջարկվում էր վեր հանել Թուրքիային

¹ “Hürriyet”, 23. 08. 1974.

անհանգստացնող խնդիրները՝ վերջինիս վրա ճնշում գործադրելու նպատակով²: Փաստաթղթում չի նշվում, թե որ խնդիրների մասին է խոսքը, սակայն կարելի է ենթադրել, որ հայկական տարածքների հարցը ևս ընդգրկված էր: Հատկապես Միացյալ Նահանգները Հայկական հարցը շահարկում է 1967 թ., ինչը մեծ արձագանք է գտնում թուրքական մամուլում:

1960-ական թթ. ԽՍՀՄ-ը, օգտվելով թուրք-ամերիկյան լարված հարաբերություններից, փորձում է բարելավել խորհրդա-թուրքական կապերը: Չնայած այն հանգամանքին, որ ԽՍՀՄ-ը վստահեցնում էր, որ Թուրքիայից որևէ տարածքային պահանջ չունի, սակայն պաշտոնական Անկարային անհրաժեշտ էին երաշխիքներ: Դրանով է պայմանավորված, որ Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելը 1966 թ. դեկտեմբերի 26-ին ԽՍՀՄ-ի վարչապետ Ա. Կոսիգինի՝ Թուրքիա այցի ժամանակ մեկ անգամ էլ պահանջում է, որ երկու երկրների փոխհարաբերությունները զարգանան «տարածքային ամբողջականության փոխադարձ հարգանքի հիման վրա»³: Մի քանի օր անց՝ 1967 թ. հունվարի 2-ին, ամերիկյան «Newsweek» շաբաթաթերթը, Ա. Կոսիգինի՝ Անկարա կատարած այցի հետ կապված, հրատարակում է «Հանդիպում Անկարայում» («Set Appointment in Ankara») խորագիրը կրող հոդվածը, որտեղ բացահայտ ցույց է տրվում, որ ԱՄՆ-ի կառավարությունը դժգոհ է խորհրդային բարձրաստիճան պատվիրակությանը ցուցաբերած ջերմ ընդունելությունից, հատկապես թուրքական իշխանությունների որդեգրած կեցվածքից: Հոդվածում անհայտ հոդվածագիրը ներկայացնում էր, թե վերջին երեք դարերի ընթացքում ինչպես են զարգացել ռուս-թուրքական հարաբերությունները՝ մանրամասն նկարագրելով ռուս-թուրքական պատերազմները, նույնիսկ հիշեցնում էր, որ 1945 թ. ԽՍՀՄ-ը հավակնություններ է ունեցել սևծովյան նեղուցների նկատմամբ, ինչը պատճառ է հանդիսացել նոր լարվածության⁴: Սակայն այս ամենի հետ մեկտեղ չի խոսվում Կարսի և

² Foreign Relations Of The United States, Cyprus; Greece; Turkey, 1964–1968, Volume XVI, United States Government Printing Office, Washington, 2000, p. 81.

³ “Milliyet”, 27.12.1966.

⁴ Set Appointment in Ankara, Newsweek, Vol. LXIX, No. 1, January 2, 1967, pp. 26–27.

Արդահանի պահանջի մասին, որն արվել էր նույն 1945 թ.: Հոդվածի վերջում բերվում են Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելի խոսքերը. «Թուրքիայի կառավարությունը անկեղծ ցանկանում է, որ խորհրդաթուրքական հարաբերությունները զարգանան ազգային գերիշխանության, հողային ամբողջականության, իրավունքների հավասարության և միմյանց ներքին քաղաքականությանը չմիջամտելու սկզբունքների հիման վրա»⁵: Ակնհայտ է, որ Անկարայի հիմնական նպատակն էր Մոսկվայից «տարածքային ամբողջականության» վերաբերյալ երաշխիքներ ստանալ, այդ դեպքում Վաշինգտոնի սպառնալիքներն արժեզրկվում էին, և Թուրքիայի դերակատարումը փոխվում էր՝ կատարողից վերածվելով թելադրող երկրի: Ամերիկյան հոդվածի անհայտ հեղինակը ևս զարգացնում էր այդ գաղափարը՝ նշելով, թե «Թուրքիան, ինչպես և Եվրոպան, այլևս Խորհրդային Միությունից անմիջական վտանգ չի տեսնում և ցանկանում է թուլացնել ԱՄՆ-ի հետ կապը»⁶: Միաժամանակ առաջ քաշելով այն տեսակետը, որ Անկարան փորձում է «երկակի խաղ խաղալ Արևելքի և Արևմուտքի հետ՝ լավագույն տնտեսական և դիվանագիտական պայմաններ ապահովելու համար»⁷: Այսինքն՝ ԱՄՆ-ը բացահայտ ցույց էր տալիս, որ հասկանում է Թուրքիայի որդեգրած խաղը և պատրաստ է հակահարվածի: Եվ կրկին օրակարգում հայտնվում է Հայկական հարցը:

Հոդվածի հրապարակումից երեք օր անց՝ հունվարի 5-ին, Հայ դատի հանձնախումբն ամերիկյան մամուլում հրապարակում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Փոքրամասնությունների խտրականության կանխման ու պաշտպանության ենթահանձնաժողովին ուղղված մի հայտարարություն, որում կոչ էր արվում հանձնախմբին քննարկել 1915-1923 թթ. հայերի ցեղասպանության հարցը⁸: Հունվարի 16-ին ենթահանձնաժողովին են փոխանցում հուշագիր⁹, դրա հետ համատեղ հունվարի 18-22-ին Հայ դատի կենտրոնական

⁵ Նույն տեղում, էջ 27:

⁶ Նույն տեղում, էջ 26:

⁷ Նույն տեղում, էջ 26-27:

⁸ Հայ դատի աշխատանքներ, Հայ դատի կենտրոնական հանձնախումբ, Պոստըն, 1967, էջ 1-2:

⁹ Նույն տեղում, էջ 3-4:

հանձնախումբը Նյու Յորքի ՄԱԿ-ի գրասենյակի առջև բազմահազարանոց ցույցեր է կազմակերպում: Ներկաները պահանջում էին «պատժել ցեղասպանության հեղինակներին», «վավերացնել Ցեղասպանության դեմ համաձայնագրի 6-րդ հոդվածը»¹⁰, «պաշտպանել հայության իրավունքները՝ արդարացի հատուցումով», «վերահաստատել անկախությունը այն ժողովուրդների, որոնք տառապել են ցեղասպանության ոճիրների հետևանքով»¹¹ և այլն:

Հայկական ցույցերը լայն արձագանք են գտնում թուրքական մամուլում: Հունվարի 24-ին «Yeni İstanbul» թերթը, անդրադառնալով ամերիկահայերի բողոքի ցույցերին, գրում է, թե «Հայերը համաշխարհային մակարդակով պայքար են սկսել թուրքերի դեմ»¹²:

Ամերիկյան մամուլը, հայերի բողոքի ցույցերի լուսաբանումից բացի, նոր հրապարակումներով է հանդես գալիս: Հունվարի 23-ին «Newsweek» շաբաթաթերթը հրատարակում է Ջավեն Մաըրյանի՝ «Your Land is My Land» խորագիրը կրող նամակը: Պարբերականը տպագրում է նաև Ս. Դեմիրելի նկարը, որի տակ գրված էր. «Դեմիրել, ու՛մն է տարածքը» («Demirel: Whose Territory?»): Նամակն ուներ հետևյալ բովանդակությունը. «Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելը հայտարարել է, որ «թուրք - խորհրդային հարաբերությունները զարգանում են տարածքային ամբողջականության սկզբունքի հիման վրա»: Ես նկատում եմ խաղաղության հաստատում անարդար հիմքերի վրա: Խորհրդային կառավարությունն իրավասու չէ երաշխավորելու Թուրքիայի տարածքային ամբողջականությունը, քանի որ Հայաստանում և Սփյուռքում 5.5 միլիոն հայեր կան: Պետք է հիշել, որ հայերը տեղահանվեցին իրենց 3000 տարվա հայրենիքից, ու չպետք է մոռանալ 1915-1921 թթ. 1.5 միլիոն հայերի կոտորածները, որոնք ենթարկվեցին XX դ. առաջին ցեղասպանությանը:

Հայերը չեն հրաժարվել և երբեք չպիտի հրաժարվեն այն իրավունքներից, իրենց բռնագրաված հայրենիքից, որն այսօր կոչվում է

¹⁰ Ցեղասպանության դեմ համաձայնագրի 6-րդ հոդվածը նախատեսում էր միջազգային դատական ատյան ստեղծել, որը կքններ ցեղասպանական արարքները:

¹¹ Հայ դատի աշխատանքներ, Հայ դատի կենտրոնական հանձնախումբ, էջ 5:

¹² «Yeni İstanbul», 24.01.1967.

Արևելյան Անատոլիա»¹³:

Այս նամակը կարծես թե նախազգուշացում էր Թուրքիային: Վերջինիս միջոցով ԱՄՆ-ը մեկ անգամ ևս հիշեցնում էր պաշտոնական Անկարային, որ գոյություն ունի Հայկական հարց, որը մոռացված չէ, և անհրաժեշտության դեպքում, եթե Թուրքիան շարունակի իր քաղաքական խաղերը, կարող է օրակարգում հայտնվել, և չի բացառվում, որ այդ դեպքում Թուրքիան կկորցնի Արևմտյան Հայաստանի տարածքները: Այլ կերպ ասած՝ ԱՄՆ-ը սպառնում էր Թուրքիայի տարածքային ամբողջականությանը:

Նկատենք, որ Զ. Մալրոյանի «Newsweek» շաբաթաթերթին ուղարկած նամակը որոշակի խմբագրական փոփոխության էր ենթարկվել: Ինչը պարզ երևում է նամակի բնօրինակից, որն ամբողջությամբ հրատարակվել էր սփյուռքահայ մամուլում¹⁴, բացի դրանից, նամակի հեղինակը ևս դա արձանագրում է: Նախ՝ թերթը չէր հրատարակել այն հատվածը, որտեղ ներկայացվում էր Երևանում Մեծ եղեռնի 50-րդ տարելիցի առնչությամբ կազմակերպված բազմահազարանոց ցույցը: Բացի դրանից, հայերի թիվը 5 միլիոնից հասցվել էր 5.5-ի, իսկ զոհերի թիվը 2 միլիոնից նվազեցվել էր 1.5-ի: Վերջին պարբերության մեջ ավելացվել էր «երբեք» բառը, որը սրություն էր տվել բովանդակությանը: Սակայն տեքստից չէր հեռացվել այն հատվածը, որտեղ 1915-1921 թթ. հայերի կոտորածները հստակ որակվում էին «20-րդ դ. առաջին ցեղասպանություն»: Այսինքն՝ այդ կերպ ԱՄՆ-ը սպառնում էր, որ պատրաստ է ճանաչելու Հայերի ցեղասպանությունը: Միաժամանակ, ինչպես հայտնի է, ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգի Մոնթեբելլո քաղաքի քաղաքապետարանի ժողովը 1965 թ. հայերին թույլատրել էր հանրային այգում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիր կառուցել¹⁵: Վերջինիս աշխա-

¹³ Բերված է հրատարակված նամակի ամբողջական թարգմանությունը: St'ou Messerlian Z., Your Land is My Land, "Newsweek", Vol. LXIX, No. 4, January 23., 1967, p. 3.

¹⁴ «Ազդակ», Բեյրութ, 30.01.1967:

¹⁵ Molina S., Thousands commemorate Armenian genocide at site of Montebello monument, Whittier Daily News, 24.04.2012,

տանքներն արդեն սկսվել էին, և ամերիկյան մամուլն այդ օրերին լուսաբանում էր այն:

«Newsweek» թերթում հրատարակված Զ. Մսրըլյանի նամակը, սփյուռքահայ մամուլից¹⁶ բացի, լայն արձագանք է գտնում նաև թուրքական թերթերում: Հոդվածին առաջինն արձագանքում է «Yeni Gazette»-ը: Վերջինիս հոդվածի տեքստը թարգմանվում և հրատարակվում է սփյուռքահայ մամուլում:

«Հայկական պահանջներուն արձագանքը Թուրքիոյ մէջ» խորագիրը կրող հրատարակումը ներկայացնում է «Yeni Gazette» թերթի հոդվածի թարգմանությունն ամբողջությամբ: Թարգմանության համաձայն՝ մամուլը գրում էր. «Անցեալ շաբաթ, արտասահմանի հայերը, Թուրքիոյ դէմ բազմաթիւ քարոզչութիւններ ըրին: Նախ ամերիկահայ ամէնէն շատ կարդացուած մէկ պարբերաթերթին՝ «Նիւզուիք»ի մէջ Պէյրուսէն հայ փրոֆեսոր մը նամակ մը հրատարակեց, մեղադրելով Խորհրդային Ռուսիան, աւելի ճիշդը Թուրքիան, առարկելով որ Արեւելեան Անատոլուն հայերունն է եւ իբր այդ՝ Ռուսիա չի կրնար երաշխաւորել Թուրքիոյ հողային ամբողջութիւնը (առանձին կու տանք այդ նամակը)»¹⁷: Զ. Մսրըլյանի նամակի թարգմանությունը տալուց բացի, թերթը պահը բաց չէր թողնում մեկ անգամ էլ անդրադառնալու ԱՄՆ-ի Մոնթեբելլո քաղաքում Հայոց ցեղասպանության հուշահամալիրի կառուցմանը, ինչպես նաև հիշատակում է Նյու Յորքի ՄԱԿ-ի շենքի առջև հայերի կազմակերպած բազմահազարանոց ցույցը՝ ավելացնելով, որ «դրանով չբավարարվելով հայերը խնդրագիր են փոխանցել ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Փոքրամասնությունների խտրականության կանխման ու պաշտպանության ենթահանձնաժողովին՝ խնդրելով թուրքերին դատել 1915 թ. Ցեղասպա-

<http://www.whittierdailynews.com/general-news/20120424/thousands-commemorate-armenian-genocide-at-site-of-montebello-monument>

¹⁶ Նկատենք, որ «Newsweek» շաբաթաթերթում հրատարակված Զավեն Մսրըլյանի նամակը սփյուռքահայ մամուլում արտատպվել է մինչև 1967 թ. ապրիլ ամիսը: Մանրամասն տե՛ս «Յառաջ», Փարիզ, 28.01.1967, «Ազդակ», Բեյրութ, 30.01.1967, «Զարթոնք», Բեյրութ, 31.01.1967, «Հայրենիք», Բոստոն, 7. 02. 1967, «Արև», Կահիրե, 15.02.1967, «Պայքար», Բոստոն, 15.03.1967 և այլն:

¹⁷ «Ազդակ», Բեյրութ, 30.01.1967:

նության առթիվ, իբրև մարդկության դեմ հանցանք գործած»¹⁸: Հոդվածի վերջում թուրքական թերթը գրում է. «...պատմության մեջ 50 տարի առաջ պատահած ու մոխրացված դեպքերին վերադառնալը ցավ է պատճառում այն 77 հազ. հայերին, որոնք Թուրքիայի մեջ են ապրում իբրև հավատարիմ և լավ հայրենակիցներ: Մեր այդ հայրենակիցներն ազատ ու երջանիկ են, և նրանք են, որ ամենից ավելի յուրացրել են թուրքական մշակույթը»¹⁹: Նման եզրակացությամբ թուրքական կողմը փորձում էր հիշեցնել, որ դեռևս Թուրքիայի տարածքում ապրում են հայեր, որոնց կյանքի համար իրական սպառնալիք են Սփյուռքում ընթացող հակաթուրքական գործողությունները:

Թուրքերի նախազգուշացումը որևէ կերպ չկասեցրեց սփյուռքահայերի ծրագրերի իրականացումը, ընդհակառակը, վերջիններս պատրաստվում էին էլ ավելի լայն գործունեություն ծավալել: Մեկ օր անց՝ 1967 թ. հունվարի 31-ին, նույն «Ազդակ» թերթը հրատարակում է «Ակնարկ. Անհրաժեշտ աշխատանք մը» խորագիրը կրող մի հոդված, որում անդրադարձ է կատարվում «Newsweek»-ի հոդվածին, և անհայտ հոդվածագիրը շեշտում էր, որ արևմտյան մամուլն անհրաժեշտության դեպքում այսքան շռայլ չի եղել Հայկական հարցում և խոսել է միայն «պարագայական առիթներով»²⁰: Ակնարկելով, որ իրենց հանդեպ արևմտյան պետությունների վերաբերմունքը փոխվել է, ինչը պայմանավորված է թուրք-ամերիկյան հարաբերություններում նկատվող լարվածությամբ: Ավելին՝ հույս էին հայտնում, որ «Մեծ եղեռնի յիսնամեակին առթիւ արտահայտված համազգային վրդովումը ու նաեւ Միացյալ Ազգերուն կատարուած դիմումները որոշ արձագանք կգտնեն միջազգային մամուլի մեջ»²¹: Հոդվածի համաձայն՝ հայերն այս ուղղությամբ դեռ մեծ աշխատանք ունեն անելու. «Ունինք գիտնականներ, գրագետներ, օտար լեզուներով արտայայտուող հրապարակագիրներ, որոնք աշխարհի ամէն անկիւն դեր մը ունին կատարելիք: Իրաքանչիւրը դեսպան մըն է իր գտնուած միջավայրին մէջ և կրնայ քաղաքական մտայնութիւններու մէջ ի նպաստ հայկական դատին մթնոլորտ

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ «Ազդակ», Բեյրութ, 31.01.1967:

²¹ Նույն տեղում:

ստեղծել: Կասկած չկայ նաեւ, որ թէ բոլոր այդ ներկայացուցիչները ունեն իրենց անձնական բարեկամները, - գիտնական, գրագետ կամ հրապարակագիր, որոնց խօսքը կշիռ կրնայ ունենալ եւ որոնք պիտի զգան, թէ միջազգային խաղաղութեան եւ արդարամտութեան ի նպաստ ծայն բարձրացնելը պատուաբեր գործ մըն է»²²: Այլ կերպ ասած՝ կոչ էր արվում արտերկրում ապրող հայերին լայնածավալ քարոզչություն իրականացնել ի նպաստ Հայկական հարցի՝ օգտագործելով սփյուռքահայ մտավորականությանը, որոնք արդեն մեծ հեղինակություն էին վայելում:

«Newsweek»-ում հրատարակված Զ. Մալրոյանի նամակը և սփյուռքահայերի ծավալած գործունեությունը պատճառ են հանդիսանում, որ Հայկական հարցը հայտնվի Թուրքիայի կառավարության ուշադրության կենտրոնում: 1967 թ. հունվարի 30-ին Թուրքիայի ազգային անվտանգության խորհուրդը երկարատև՝ հինգամյա նիստի ընթացքում կիպրական խնդրի հետ համատեղ քննարկում է նաև այն: Նիստին ներկա էին Թուրքիայի նախագահ Զ. Սունայը, վարչապետ Ս. Դեմիրելը, զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Զ. Թուրալը, պաշտպանության նախարար Ա. Թոփալօղլուն և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ, ինչպես նաև ցամաքային բանակի, նավատորմի և օդուժի հրամանատարներ²³: Ս. Դեմիրելը, ներկայացնելով խնդիրը, նշում էր, որ վերջին ամիսներին Միացյալ Նահանգների և Լիբանանի հայերը հակաթուրքական քարոզչություն են իրականացնում, ինչը որոշ լարվածություն է առաջացրել²⁴: Ներկաները, քննարկելով հարցը, որոշում են հակազդող քայլեր ձեռնարկել ընդդեմ հայերի միջոցառումների²⁵: Եվ քանի որ Թուրքիայի ազգային անվտանգության խորհրդի որոշումները հիմնականում չեն բացահայտվում, միայն կարելի է ենթադրել, թե ինչ միջոցառումների մասին է խոսքը:

Հավանական է, որ սփյուռքահայերի վրա ճնշում գործադրելու համար օգտագործում են ստամբուլահայերի գործոնը: Այդ օրերին թուրքական մամուլը հրատարակում էր հակահայկական հոդվածներ,

²² Նույն տեղում:

²³ «Մարմարա», 31. 01. 1967:

²⁴ Նույն տեղում:

²⁵ Նույն տեղում:

որոնք բորբոքում էին թուրք հասարակությանը: Առանձնացնենք փետրվարի 1-ին «Yeni Gazette»-ում լույս տեսած Հիքմեթ Բիլի²⁶ «Այսօր Յեղասպանությունն ինչպե՞ս է լինում» («Bugün genosid nasıl oluyor?») խորագիրը կրող հոդվածը: Հոդվածագիրը փորձում է հերքել Հայոց ցեղասպանության փաստը՝ հայերին մեղադրելով թուրքերին վարկաբեկելու համար: «Յեղասպանությունը, ստուգաբանորեն, նույն հողում ապրող երկու ցեղերից մեկի բնաջնջումն է մյուսի կողմից: Ներկայումս արտերկրում ապրող հայերը կես դար առաջ Արևելյան Անատոլիայում թուրքերի կողմից ցեղասպանության ենթարկվելու մասին պնդելու հիվանդությամբ են տառապում»²⁷, - գրում է նա: Բացահայտ հայտարարելով, որ հայերը մեղավոր են տեղի ունեցածում²⁸:

Հիքմեթ Բիլը նաև խոսում է ներկայիս ստամբուլահայերի մասին՝ շեշտելով, որ վերջիններս «Ստամբուլի և ողջ Թուրքիայի բարիքներից» իրենցից ավելի են օգտվում²⁹, սփյուռքահայերին հարցնելով. «արդյո՞ք չեք մտածում, որ Ստամբուլում բնակվող հայերը իրենց տեղերում հանգիստ կարող են ապրել, թե՞ ոչ»³⁰: Հոդվածն ավարտվում է հետևյալ եզրահանգումով. «Այս դարում ցեղասպանությունն այլևս չի լինում նախկինի պես: Յեղասպանությունը՝ Թուրքիայից դուրս խեղճ ու զաղթական ապրող հայերի ընտրած այս նոր ճանապարհով է կատարվում: Այլևս մեկը մյուսին հեշտությամբ չի կարողանում կոտորել, բայց կարող է օղը անշնչելի աստիճանի հասցնել: Ահա այն ամենը, որի արդյունքում Ստամբուլի մեջ ոչ մի հայ չի մնա: Որովհետև նրանց միակ ելքը հայրենիքի վերջին այս պատառից փախչելու մեջ է լինելու....»³¹: Հոդվածից բերված վերջին այս պարբերությունը բացահայտ ստամբուլահայությանն ուղղված սպառնալիք էր:

²⁶ Հիքմեթ Բիլ (1918-2003 թթ.) - թուրք լրագրող և իրավաբան: Նա Կիպրոսի թուրքական ասոցիացիայի նախագահն էր և 1955 թ. սեպտեմբերի 6-7-ին Ստամբուլում հույների և հայերի նկատմամբ իրականացրած դեպքերի հրահրողներից մեկը:

²⁷ “Yeni Gazette”, 01.02.1967.

²⁸ Նույն տեղում:

²⁹ Նույն տեղում:

³⁰ Նույն տեղում:

³¹ Նույն տեղում:

Ի պատասխան մեկ օր անց՝ փետրվարի 3-ին, Ստամբուլում լույս տեսնող «Ժամանակ» օրաթերթը հրատարակում է Կարախա Կ. Մուրատեանի «Ալ հանգիստ ձգեցէք հայերը» խորագիրը կրող հոդվածը, որտեղ ստամբուլահայերն իրենց բողոքի ձայնն էին բարձրացնում՝ փորձելով հասկանալ, թե ինչու իրենք պետք է պատասխան տան, երբ իրենք երկրի օրինապահ քաղաքացիներ են³²: Մինչդեռ մի քանի օր անց Ստամբուլում հրատարակվող հայկական «Մարմարա» օրաթերթը տեղեկացնում է, որ արտասահմանյան հայերի հակաթուրքական գործունեության և մամուլի հրապարակումների արդյունքում երկրի ոստիկանությունն իր պաշտպանության տակ է վերցրել Գում Գափուփ Հայոց պատրիարքարանը³³:

«Զարթոնք» թերթի խմբագիր Գ. Ահարոնյանը «Թրքական ծանր գրգռություն Պոլսոյ հայութեան դէմ...» խորագիրը կրող հոդվածում, անդրադառնալով «Մարմարա» թերթի հրապարակած լուրին, Թուրքիայի իշխանություններին հարցնում էր, թե «ինչու՞ է առաջացել նման պաշտպանության անհրաժեշտություն» և միաժամանակ պատասխանում. «Իրողությունը այն է, որ թրքական շատ մը թերթեր, - «Ենի Կագեթէ», «Ճումհուրիյեթ», եւ այլն, - անցնող շաբաթներուն ոչ միայն անվայել յարձակումի թիրախ դարձուցին լիբանանահայութիւնը եւ ամերիկահայութիւնը, այլեւ ահավոր զրպարտութիւն եւ ամբաստանութիւն կատարեցին պոլսահայութեան եւ յատկապէս Հայոց Պատրիարքարանին դէմ»³⁴: Ավելին՝ հոդվածագիրը տեղեկացնում է, որ, համաձայն թուրքական մամուլի, արտասահմանում հակաթուրքական քարոզչությունը ֆինանսավորվել է Պոլսո Հայոց պատրիարքարանի կողմից³⁵: Իհարկե, դա ընդամենը զրպարտանք էր, որ էլ ավելի էր գրգռել թուրք հասարակությանն ընդդեմ հայերի:

Հակահայկական մթնոլորտին անդրադառնում է նաև Ստամբուլի՝ ԽՍՀՄ-ի հյուպատոսարանը՝ տեղեկացնելով, որ «1965-1967 թթ. տեղի են ունեցել մի շարք իրադարձություններ, որոնք անդրադարձել

³² «Ժամանակ», Ստամբուլ, 03.02.1967:

³³ «Մարմարա», 05. 02. 1967: «Այգ», Բեյրութ, 08.02.1967 (արտատպված է «Մարմարա» թերթից):

³⁴ «Զարթոնք», 11.02.1967:

³⁵ Նույն տեղում:

են հայ համայնքի կյանքի վրա: Հատկապես 1965 թ. Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի միջոցառումները հակահայկական մթնոլորտ են ստեղծել երկրում: Թուրքական մամուլում հրատարակվել են հակահայկական հոդվածներ: Թուրքիայի կառավարությունն էլ ստիպում է երկրում ապրող հայերին հանդես գալ հայտարարություններով, որտեղ նրանք դատապարտում են սփյուռքահայերի հակաթուրքական գործունեությունը: Դրանք տպագրվում են երկրի առաջատար պարբերականներում: Ելույթով հանդես է եկել նաև Պոլսո Հայոց պատրիարք Շնորհք Գալուստյանը: Նա իր խոսքում քննադատել է սփյուռքահայերի հակաթուրքական տրամադրությունները»³⁶: Այս փաստաթղթում հստակ նշված է, որ Թուրքիայում ապրող հայերը հայտարարություններ են անում կառավարության ճնշման ներքո:

Տեղեկացնենք, որ 1967 թ. մարտին Վաշինգտոնի՝ Թուրքիայի դեսպանատան տեղեկատվության խորհրդատու Էրդողան Ուլուսը «Պատմության ծանոթագրություն» («Footnote to History») խորագրով պատասխան-նամակ է հղում «Newsweek»-ին, որում ներկայացնում է պաշտոնական Անկարայի՝ Հայկական հարցի վերաբերյալ առաջ քաշած թեզը: Այն չի տարբերվում մյուս հոդվածներից: Նամակագիրը կրկին ամեն ինչում մեղադրում է «արտաքին ուժերին»³⁷: Թուրքական մոտեցումը բավականին հստակ էր. Օսմանյան կայսրությունում հայերը և թուրքերը եղբայրաբար էին ապրում, հայերը երջանիկ և բարգավաճ էին, օտարը եկավ և լարվածություն մտցրեց, դժբախտ դեպքեր տեղի ունեցան, երկու կողմերն էլ տուժեցին: Բայց հիմա պետք է մոռանալ անցյալը, համակերպվել իրականության հետ, հատկապես այն, ինչ վերաբերում է հողային հարցին: Այս տեսակետն արտահայտված էր ոչ միայն «Newsweek»-ում հրատարակված թուրք դիվանագետի նամակում, այլև Հիքմետ Բիլի հոդվածում և թուրք պաշտոնյաների

³⁶ ՀԱԱ, ֆ. 326 (Արտաքին գործերի նախարարության ֆոնդ), ց. 1, գ. 408 (Ստամբուլի՝ ՍՍՀՄ Գլխավոր հյուպատոսարանի փոխհյուպատոսի տեղեկանքը «Ստամբուլի հայկական համայնքի վիճակի մասին», 16. 05.1966 թ.), թ. 2-3:

³⁷ Ulus E., Footnote to History, “Newsweek”, Vol. LXIX, No. 10, March 6, 1967, p. 2.

հայտարարություններում: Այսինքն՝ 1960-ական թթ. դա Թուրքիայի պաշտոնական տեսակետն էր:

Հետաքրքիր է նաև այն փաստը, որ այս նամակից հետո ամերիկյան շաբաթաթերթը, որը հանդես էր գալիս հակաթուրքական հոդվածներով, ոչ միայն չի տպագրում հայերի ուղարկած պատասխան-նամակը, այլև խուսափում էր վերջիններիս հետ կապ հաստատելուց, ինչը վկայում էր, որ թուրք-ամերիկյան հարաբերություններում կրկին փոփոխություններ էին տեղի ունեցել:

Մինչդեռ սիյուռքահայերը շարունակում են իրենց գործունեությունը: 1967 թ. ապրիլին՝ Թուրքիայի նախագահ Ջուդեթ Սունայի՝ ԱՄՆ այցի նախօրեին, «New York Times» թերթը տպագրում է Ամերիկահայ ազգային կոմիտեի նամակը: Այն պահանջում էր ՄԱԿ-ի օրակարգ ներառել Հայկական հարցը³⁸: Նույն պահանջն առաջ է քաշում նաև ֆրանսիական մամուլը Սունայի՝ Փարիզ կատարած այցի ընթացքում³⁹: Ի պատասխան թուրքական մամուլը 1967 թ. ապրիլին լուրեր է տարածում, որ Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ի. Չաղլայնօղլուն դրական արդյունքների է հասել ԱՄՆ-ի Մոնթեբելլո հուշահամալիրի հետ կապված⁴⁰: Սակայն իրականում դրանք սուտ լուրեր էին, քանի որ Մոնթեբելլոյի Հայոց ցեղասպանության հուշահամալիրի բացումը տեղի է ունեցել 1968 թ.⁴¹:

Եվս մեկ կարևոր հանգամանք. 1967 թ. փետրվարին Թուրքիայի կառավարությունը, հիմք ընդունելով 1965 թ. Մայիսի՝ ԽՍՀՄ-ի արտաքին գործերի նախարար Ա. Գրոմիկոյի՝ երկու երկրների միջև սահմանների վերագծման առաջարկը, համաձայնվում է կնքել խորհրդա-թուրքական արձանագրություն: Այն ստորագրվում է 1967 թ. փետրվարի 28-ին Անկարայում: 1967 թ. ապրիլին էլ թուրքական մամուլը տեղեկացնում էր, որ Թուրքիան ԽՍՀՄ-ի հավանական

³⁸ “New York Times”, 19.04.1967.

³⁹ «Չարթօնք», 02. 07. 1967:

⁴⁰ «Չարթօնք», 23. 04. 1967:

⁴¹ Molina S., Thousands commemorate Armenian genocide at site of Montebello monument, Whittier Daily News, 24.04.2012, <http://www.whittierdailynews.com/general-news/20120424/thousands-commemorate-armenian-genocide-at-site-of-montebello-monument>

հարձակումից պաշտպանվելու համար առաջարկել է ՆԱՏՕ-ին «աթոմական ականերու դաշտեր հաստատուին թուրք և ռուս սահմանին վրայ, նկատելով, որ Թուրքիա հինգ զորաբաժին ունի հոն»⁴²: Թուրքական կողմի այս հայտարարությունները վկայում են, որ պաշտոնական Անկարան փոփոխական էր իր արտաքին քաղաքականության մեջ: Փորձում էր հավատացնել արևմտյան դաշնակիցներին, որ իրեն անհանգստացնում է տարածքային ամբողջականության հարցը և բոլորովին չի վստահում ԽՍՀՄ-ին: Ավելին՝ անհրաժեշտության դեպքում պատրաստ է վերանայելու վերջին տարիներին երկու երկրների միջև հաստատված ջերմ հարաբերությունները: Չնայած ժամանակ առ ժամանակ թուրքական մամուլի կողմից տարածվող այս սպառնալիքներին՝ 1967 թ. սեպտեմբերին Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելը պաշտոնական այց է կատարում Մոսկվա և Բաքու՝ արժանանալով ջերմ ընդունելության: Հետագայում՝ 1968-1969 թթ. խորհրդա-թուրքական հանդիպումների ընթացքում հիմնականում քննարկում էին սահմանի վերագծման հարցը: Թուրքական մամուլն էլ այդ առիթով տարաբնույթ լուրեր էր տարածում, որոնք էլ ավելի էին լարում իրավիճակը:

Այսպիսով, 1960-ական թթ. երկրորդ կեսին Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության ճանաչման համար մղվող պայքարում արմատական շրջադարձ այդպես էլ չի կատարվում: Սակայն 1965 թ. Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի լայնածավալ նշումը սփյուռքահայ գաղթօջախներում և հայրենիքում լայն արձագանք է գտնում միջազգային մամուլում և մեծ խթան է հանդիսանում հետագա տարիներին Հայոց ցեղասպանության դատապարտման ու նրա պաշտոնական ճանաչման համար աշխարհի առաջադեմ ուժերի համախմբման գործում: Սփյուռքահայերի գնահատմամբ Մեծ եղեռնի 50-րդ տարելիցը եկել էր ամփոփելու հայության անցած ուղու արդյունքները և դնելու գործունեության նոր ուղիների, նոր մարտավարության սկիզբը: Ավելին՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված սփյուռքահայերի գործողությունները Թուրքիայում լուրջ անհանգստություն են պատճառում և ստիպում որոշ հակաքայլեր ձեռ-

⁴² «Մարմարա», 21. 04. 1967:

նարկել, որոնք կարճ ժամանակ անց դառնում են թուրքական ժխտողական քաղաքականության ու հակահայկական քարոզչության հիմքերը:

MELKONYAN CHRISTINE

THE ISSUE OF RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE IN THE SECOND HALF OF THE 1960S

In the second half of the 1960s the struggle of the Armenians in the Diaspora, for the recognition of the Armenian Genocide by the international community, became more active. As a result of the interest of the international community to the Armenian Question became more intensified and was discussed in international press. In the January 23, 1967 the newspaper “Newsweek” has published a letter in which stressed that the Soviet Union had no right to guarantee the territorial integrity of Turkey as Armenians rightfully claim part of this territory as theirs. The author added that one should remember that the Armenians were ejected from their homeland of 3000 years and were the victims of the first genocide of the 20th century. The letter was welcomed by the diaspora press. However, the Turkish reaction was hostile.